Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2023 թվականի մայիսի 14-ից 16-ը
Վրաստան (ք. Թբիլիսի) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Գրիգորի Դավթյան, ՀՀ ՊԵԿ Միջազգային համագործակցության վարչության հարկային համագործակցության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Վրաստան, ք. Թբիլիսի, 2023թ. մայիսի 14-ից 16-ը

3. Հրավիրող կողմը՝

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումի (Գլոբալ ֆորում) քարտուղարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Միջոցառմանը մասնակցության հիմնական նպատակն էր մասնակցել ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի կողմից կազմակերպվող՝ հարկային գործերով տեղեկությունների փոխանակման համար իրավասու մարմինների 10-րդ ամենամյա կոնֆերանսին: Վերջինս թույլ է տալիս ՀՀ ՊԵԿ իրավասու ստորաբաժանման ներկայացուցիչներին ծանոթանալ ոլորտում ընթացող միջազգային զարգացումներին, փոխանակվել փորձով և գիտելիքներով, հանդիպել և անմիջական կապ հաստատել այլ երկրների գործընկերների հետ, քննարկել միմյանց հարցումների կատարման ընթացիկ խնդիրները:

5. Քննարկված թեմաները՝

Միջոցառման ընթացքում ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի կողմից ներկայացվել են՝

- Իրական սեփականատիրության մասին տեղեկությունների մասով FATF կողմից կատարված աշխատանքները, FATF իրական սեփականատիրության ստանդարտի վերջին վերանայումը: Մասնավորապես, փոփոխություններ են կատարվել իրավաբանական անձի և իրավական պայմանավորվածությունների մասով FATF 24 և 25 Առաջարկություններում և վերջիններիս վերաբերող մեկնաբանություններում:

- Հարցումների հիման վրա տեղեկությունների փոխանակման ընթացքում կիրառվող կապուղիների սահմանափակումները: Մասնավորապես՝ ներկայացվել են չափանիշները, որոնք պետք է հաշվի առնել կապուղիների ընտրության ժամանակ, կապի տարբեր եղանակների գծով տարածված խնդիրները և դրանց հաղթահարման ուղիները: Մասնակիցներին ներկայացվել է ՏՀԶԿ Գլոբալ փոխանակման համակարգի (GTS) նորացման արդյունքնում հասանելի դարձած հանարվորությունները:

- Հարցումների հիման վրա տեղեկությունների փոխանակման ստանդարտի առումով ծանուցման և բողաքարկման իրավունքների գործնական կիրառման հիմնախնդիրները: Մասնավորապես ներկայացվել է շրջանակը, որի պարագայում ծանուցման և բողաքարկման իրավունքների իրագործումն համապատասխան է ընդունելի ստանդարտին:

- Փոխանակումից առաջ՝ փոխանակվող տեղեկությունների իսկության հավաստիացումը, մասնավորապես, հայցող պետության՝ տեղեկությունների հավաստման գծով հնարավոր լրացուցիչ պահանջների ապահովումը ՏՀԶԿ-ի համապատասխան ստանդարտի դրույթների պարագայում.

- Եկամուտների այլ տեսակների գծով տեղեկությունների ավտոմատ փոխանակման հեռանկարները, մասնավորապես, ՏՀԶԿ տեղեկություններ ավտոմատ փոխանակման ստանդարտների (CRS, CbC) ազդեցությունը այլ եկամտատեսակների գծով տեղեկությունների փոխանակման վրա և ՏՀԶԿ հնարավոր քայլերը՝ դրանց ակտիվացման նպատակով.

- Իրավասու մարմինների համար Գլոբալ ֆորումի կողմից մշակված գործիքակազմը: Մասնավորապես, ներկայացվել են ՏՀԶԿ «Իրավասու մարմինների անվտանգ վեբկայքի» նորույթները, նոր գործառույթները, փաստաթղթերը և հրապարակումները:

Միաժամանակ, խմբային նիստերի ընթացքում մյուս երկրների պատվիրակությունների հետ քննարկվել են իրական սեփականատիրության մասին տեղեկությունների աղբյուրների հասանելիությունը և կիրառման փորձը, կապուղիների օգտագործման ընթացքում հանդիպող դժվարությունների և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կոնֆերանսի ընթացքում նախաձեռնվել են նաև երկկողմ հանդիպումներ՝ Ճապոնիայի և Վրաստանի իրավասու մարմինների ներկայացուցիչ գործընկերների հետ՝ երկկողմ համագործակցության ընթացքը քննարկելու նպատակով:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել, գրավոր որոշումներ չեն ընդունվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՏՀԶԿ կոնֆերանսներին մասնակցությունը եզակի հնարավորություն է ՀՀ ՊԵԿ հարկման նպատակով տեղեկությունների փոխանակման իրավասու ստորաբաժանման համար տեղեկանալու ոլորտում իրականացվող միջազգային զարգացումներին, ծանոթանալու առկա խնդիրների և փոխանակելու վերջիններիս լուծման ունեցած փորձը գործընկերների հետ: Այն նպաստում է այլ երկրների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ անմիջական կապի հաստատմանը, թույլ է տալիս երկկողմ քննարկման շրանակներում բարձրաձայնել հարցումների կատարման ընթացքի և ժամկետների հետ կապված արձանագրած խնդիրները: Այս առումով կարևոր է ՏՀԶԿ Իրավասու մարմինների ամենամյա կոնֆերանսներին ՀՀ ՊԵԿ իրավասու ստորաբաժանման կանոնավոր մասնակցությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Գրիգորի Դավթյան

19.05.2023թ.